ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

TELCELL WALLET

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն հրապարակային պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանում է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկող) էլեկտրոնային փողով հաշվարկների իրականացման համակարգում (այսուհետ՝ Համակարգ) էլեկտրոնային վճարային միջոցների օգտագործման, այդ թվում՝ էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման համար Հաշվառման հաշվի բացման, համալրման ու օգտագործման պայմանները և, ՀՀ գործող Քաղաքացիական օրենսգրքին համապատասխան, հանդիսանում է Թողարկողի հայտարարած ծառայություններից օգտվելու՝ պաշտոնական գրավոր հրապարակային առաջարկ (այսուհետ՝ Ծառայություններից օգտվելու օֆերտա և (կամ) Օֆերտա)՝ ուղղված Համակարգում ֆիզիկական և իրավաբանական անձանց ծառայությունների մատուցմանը:

1.2. Ծառայություններից օգտվելու օֆերտան կարող է ներկայացվել առցանց կամ Թողարկողի սահմանած այլ եղանակով:

1.3. Ընդունելով Օֆերտայի պայմանները՝ Օգտատերը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է և ամբողջ ծավալով անվերապահ ընդունում է Պայմանագրի պայմանները, ծառայություններից օգտվելու կանոններն ու ծառայությունների դիմաց գանձվող վճարները, որոնց գործող տարբերակները զետեղված են Թողարկողի պաշտոնական կայքում և (կամ) ներկայացված են Թողարկողի մասնաճյուղերում և (կամ) Թողարկողի կողմից սպասարկվող Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով (Օգտատերը և Թողարկողը՝ այսուհետ միասին Կողմեր):

1.4. Թողարկողը մատուցում է ծառայություններ, Օգտատերն օգտվում է ծառայություններից՝ ՀՀ գործող օրենսդրության, ծառայություններից օգտվելու կանոնների և Պայմանագրի պայմանների համաձայն:

1.5. Թողարկողը մատուցում է հետևյալ տեսակների ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ).

ա) Էլեկտրոնային փողի թողարկում / Հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում),

բ) Էլեկտրոնային փողի սպասարկում,

գ) Էլեկտրոնային փողով վճարման իրականացում Համակարգում գրանցված ծառայություններ մատուցողներին,

դ) Էլեկտրոնային փողի մարում,

ե) Էլեկտրոնային փողի փոխարկում,

զ) Էլեկտրոնային փողի փոխանցում,

է) Թողարկողի պաշտոնական կայքում նկարագրված այլ ծառայություններ:

1.6. Ծառայությունների տեսակների, դրանց մատուցման եղանակների, հնարավոր գործառնությունների, ժամկետների, ծառայությունների համար սահմանված միջնորդավճարների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Թողարկողի ինտերնետային կայքում, միջնորդավճարների մասին նաև իրազեկվում է նախքան յուրաքանչյուր գործարք կատարելը:

1.7. Օգտագործողների ավտոմատ եղանակով սպասարկումը իրականացվում է 24/7 ռեժիմով: Պայմանագրով սահմանված գործողությունները, որոնք չեն իրականացվում ավտոմատ եղանակով, Թողարկողն իրականացնում է իր ընդունած ներքին իրավական ակտերով սահմանված աշխատանքային օրերին ու ժամերին, որոնք ներկայացվում են Թողարկողի ինտերնետային կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

1.8. Թողարկողի կողմից սպասարկվող Telcell Wallet բջջային հավելվածի և Սպասարկման կետերի միջոցով Օգտատիրոջը մատուցվող վճարահաշվարկային որոշ ծառայությունների, մասնավորապես՝ Telcell Wallet բջջային հավելվածին կցված բանկային հաշվից և (կամ) վճարային քարտից Օգտատիրոջ վճարման հանձնարարականի հիման վրա կատարված փոխանցումների դեպքում էլեկտրոնային փող կարող է չթողարկվել:

1.9. Համակարգում հաշվարկները կատարվում են ՀՀ դրամով:

2. Հիմնական հասկացություններ

Սույն Պայմանագրի իմաստով.

2.1. **Էլեկտրոնային փող՝** Թողարկողի նկատմամբ դրամական պահանջ արտահայտող դրամական արժեք, որը.
ա) պահվում է էլեկտրոնային սարքի վրա,
բ) թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժողությունը հավասար է թողարկված էլեկտրոնային փողի արժեքին (Թողարկողի թողարկած 1 (մեկ) միավոր էլեկտրոնային փողը հավասար է 1 (մեկ) ՀՀ դրամի),
գ) ընդունվում է որպես վճարամիջոց Թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից:

2.2. **Էլեկտրոնային փող թողարկող (այսուհետ՝ Թողարկող)՝** «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն, որը ՀՀ տարածքում իրականացնում է էլեկտրոնային փողի թողարկում՝ ՀՀ օրենքների և իրավական այլ ակտերի համաձայն:

2.3. **Էլեկտրոնային փողի թողարկում/Հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում)՝** գործառույթ, որի արդյունքում Թողարկողը ավելացնում է Համակարգում գրանցված

Օգտագործողի Հաշվառման հաշվում առկա Էլեկտրոնային փողը՝ բանկային հաշվից և (կամ) վճարային քարտից, ձեռք բերելով դրամական պարտավորություն Օգտագործողի նկատմամբ:

2.4. **Օգտագործող կամ Օգտատեր՝** ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն իրավունք է ստացել Թողարկողի նախապես հայտարարած և սահմանած պայմանների ու կանոնների համաձայն իր ձեռք բերած Էլեկտրոնային փողն օգտագործել Համակարգում մատուցվող ծառայություններում:

2.5. **Հաշվառման հաշիվ (Հաշիվ)՝** Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում Օգտագործողի, Ծառայություն մատուցողի, Գործակալի կամ Փոխարկողի (այսուհետ՝ Հաճախորդ, Հաճախորդներ) նկատմամբ Թողարկողի դրամական պարտավորության հաշվառման վերաբերյալ գրառումների ամբողջություն:

2.6. **Աուտենտիֆիկացիա՝** Օգտագործողի մուտքային տվյալների (Օգտագործողի մուտքանուն (առկայության դեպքում) և գաղտնաբառ) վավերականության ստուգում:

2.7. **Սպասարկում՝** Էլեկտրոնային փողով գործառնությունների (ծառայությունների մատուցման) և դրանց հետ կապված հաշվարկների իրականացման ապահովում, որի արդյունքում Օգտագործողը հնարավորություն է ստանում համալրել Հաշվառման Հաշիվը և (կամ) Հաշվառման Հաշվին առկա էլեկտրոնային փողը ներկայացնել մարման և (կամ) փոխանցել Համակարգում գրանցված այլ Օգտագործողներին և (կամ) վճարել Ծառայություն մատուցող անձանց՝ մատուցված ծառայության, վաճառված ապրանքի դիմաց:

2.8. **Վճարում՝** գործառույթ, որի արդյունքում Ծառայություններ մատուցողի մատուցած ծառայության, վաճառած ապրանքի կամ կատարած աշխատանքի դիմաց վճարումը կատարվում է Էլեկտրոնային փողով՝ Համակարգում գրանցված վճարում նախաձեռնող Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա Էլեկտրոնային փողը նվազեցնելով վճարման ենթակա գումարի չափով՝ Համակարգում գրանցված Ծառայություն մատուցողի Հաշվառման Հաշիվը ավելացնելու միջոցով:

2.9. **Մարում՝** գործառույթ, որի արդյունքում Թողարկողը Համակարգում գրանցված Հաճախորդի Հաշվառման հաշվում առկա Էլեկտրոնային փողը նվազեցնում է մարման ենթակա հրահանգված գումարի չափով՝ բանկային հաշվին և (կամ) վճարային քարտին փոխանցելու միջոցով, պակասեցնելով իր դրամական պարտավորության չափը Հաճախորդի նկատմամբ:

2.10. **Փոխարկում՝** Թողարկողի գործառույթ, որի արդյունքում իրականացվում է ցանկացած էլեկտրոնային փող թողարկողի թողարկած էլեկտրոնային փողի փոխանակում մեկ այլ համակարգի թողարկած էլեկտրոնային փողով (այսուհետ՝ Փոխարկում): Ընդ որում՝ սույն

ենթակետով նախատեսված փոխարկման գործառույթը Թողարկողը կարող է պատվիրակել այլ անձի (այսուհետ՝ Փոխարկող):

2.11. **Փոխանցում՝** գործառույթ, որի արդյունքում Թողարկողի մոտ առաջանում է պարտավորություն՝ Համակարգում գրանցված փոխանցում նախաձեռնող Օգտագործողի Հաշվառման հաշվում առկա Էլեկտրոնային փողը նվազեցնել փոխանցման ենթակա գումարի չափով՝ համարժեք գումարի չափով ավելացնելով Համակարգում գրանցված՝ փոխանցումը ստացող մեկ այլ Օգտագործողի Հաշվառման հաշիվը:

2.12. **Գործարք՝** Թողարկողի նախապես հայտարարած և սահմանած պայմանների ու կանոնների համաձայն Օգտագործողի կողմից Էլեկտրոնային փողի ձեռքբերում և Էլեկտրոնային փողի օգտագործում Համակարգում մատուցվող ծառայություններում:

2.13. **Մնացորդ՝** Համակարգում Օգտագործողի Հաշվառման հաշվին Էլեկտրոնային փողի մնացորդ:

2.14. **Սպասարկման կետ՝** Թողարկողի մասնաճյուղեր:

2.15. **Տերմինալ՝** ավտոմատացված մեքենա, որն ապահովում է որոշակի ծառայությունների դիմաց վճարումների ընդունումը և (կամ) հաճախորդների Հաշիվների համալրումը կանխիկ դրամով (վճարումների ընդունման տերմինալ):

2.16. **Բջջային հավելված՝** շարժական սարքերում աշխատանքի ծրագրային ապահովում Թողարկողի կողմից, որի միջոցով հասանելի է դառնում Հաշվի կառավարումը, ծառայություններից օգտվելը, ինչպես նաև Օգտատիրոջ և Ծառայություն մատուցողի միջև տեղեկատվության (այդ թվում՝ էլեկտրոնային ծանուցումների) փոխանակումը:

2.17. **Գործակալ՝** Թողարկողից տարբերվող ֆինանսական կազմակերպություն, որը Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի Կանոնների համաձայն իրականացնում է Էլեկտրոնային փողի մարում և (կամ) Օգտագործողի Հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում):

2.18. **Ֆինանսական կազմակերպություն՝** դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ստացած կազմակերպություն կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղ:

2.19. **Ծառայություն մատուցող՝** իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Թողարկողի հետ կնքված պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն համաձայնել է

թողարկված էլեկտրոնային փողը որպես վճարամիջոց ընդունել իր կողմից մատուցվող ծառայությունների, վաճառվող ապրանքների կամ կատարվող աշխատանքների դիմաց:

3. Հաշվառման հաշվի տրամադրումը և օգտագործման պայմանները

3.1. Էլեկտրոնային փողի Հաշվառման հաշիվ բացելիս նախապես ներկայացվում է Ծառայություններից օգտվելու օֆերտան: Հաշվառման հաշիվ բացելով՝ Օգտագործողը Օֆերտային հավանություն է տալիս (ակցեպտավորում է), և այդ պահից ի վեր Օֆերտան, Պայմանագրի պայմանների, ծառայություններից օգտվելու կանոնների և ծառայությունների դիմաց գանձվող վճարների հետ մեկտեղ, կազմում է Թողարկողի և Օգտատիրոջ միջև կնքված՝ կատարման համար պարտադիր պայմանագիր:

3.2. Էլեկտրոնային փողի Հաշվառման հաշվի հավաստումը կատարվում է՝ Օգտագործողի նախապես մուտքագրած հեռախոսահամարին կամ էլ. փոստին Թողարկողից հաստատման ծածկագիր ուղարկելով: Եթե Օգտագործողը մուտքագրել է սխալ հեռախոսահամար կամ էլ. փոստի հասցե, ինչի պատճառով չի ստացել հաստատման ծածկագիր, ապա նա պետք է նորից անցնի Համակարգում գրանցման գործընթացը, որից հետո կստանա հաստատման նոր ծածկագիր: Ծածկագրի մուտքագրումից հետո Համակարգն առաջարկում է ստեղծել գաղտնաբառ (PIN կոդ):

3.3. Գրանցման գործընթացից հետո Օգտագործողին տրամադրվում է Հաշվառման հաշվի նույնականացման համար՝ ID, այն եզակի է, չկրկնվող:

3.4. Թողարկողը Օգտագործողին տրամադրում է Հաշվառման հաշիվ, եթե Օգտագործողն անցել է նույնականացման գործընթաց:

3.5. Էլեկտրոնային փողի Հաշվառման հաշվի բացման հավաստումը կատարվում է՝ Օգտագործողի նախապես մուտքագրած հեռախոսահամարին կամ էլեկտրոնային փոստի հասցեին կամ կապի այլ միջոցին Թողարկողի կողմից հաստատման ծածկագիր ուղարկելով:

3.6. Էլեկտրոնային փող ձեռք բերելու համար Օգտագործողը պետք է անցնի նույնականացման գործընթաց՝ Պայմանագրի 5-րդ բաժնում սահմանված եղանակով, և Համակարգում ստանա նույնականացված Օգտագործողի կարգավիճակ:

3.7. Օգտագործողի Հաշվառման հաշվում (հաշիվներում) պահվող էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամին համարժեքը՝ անկախ յուրաքանչյուր Օգտագործողի անունով բացված հաշիվների քանակից:

3.8. Հաշիվ մուտք գործելը հնարավոր է միայն Օգտագործողի Աուտենտիֆիկացումից հետո:

3.9. Օգտագործողի մուտքային տվյալները ստեղծում է Օգտագործողը՝ ինքնուրույն: Օգտագործողը կարող է գաղտնաբառը փոխել ցանկացած ժամանակ և անսահմանափակ քանակությամբ:

3.10. Օգտագործողը կրում է իր մուտքային տվյալների գաղտնիության պահպանման ողջ պատասխանատվությունը: Հաշվի հետ կապված ցանկացած գործողություն, որը կատարվել է պատշաճ մուտքային տվյալների օգտագործմամբ, համարվում է Օգտագործողի կողմից կատարված՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3.11. Օգտագործողի՝ իր մուտքային տվյալների կորստի դեպքում Թողարկողը Օգտագործողին թույլ է տալիս վերականգնել Հաշիվ մուտք գործելու հնարավորությունը՝ վերականգնման ծածկագրի մուտքագրման միջոցով, որը Թողարկողը տրամադրում է Օգտագործողի հրահանգով՝ Հաշվառման հաշվին նախկինում կցված էլեկտրոնային հասցեին կամ Օգտագործողի մուտքագրած բջջային հեռախոսահամարին կամ կապի այլ միջոցով հաղորդագրություն ուղարկելով:

3.12. Թողարկողն իրավունք ունի սահմանել Հաշվառման հաշիվ մուտքի տվյալների վերականգնման պայմանները՝ կախված Օգտագործողի Հաշվի տեսակից:

3.13. Թողարկողն իրավունք ունի Օգտագործողին մերժել Հաշվառման հաշիվ մուտքի տվյալների վերականգնումը, եթե Օգտագործողի հրահանգի ուսումնասիրման արդյունքում չի հաստատվել Օգտագործողին տվյալ Հաշվի պատկանելության փաստը:

3.14. Թողարկողն իրավունք ունի Օգտագործողի Հաշիվը արգելափակել.

3.14.1. ՀՀ իրավասու մարմինների նախաձեռնությամբ՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, համապատասխան լիազորություններ ունեցող իրավասու մարմնի կայացրած որոշման հիման վրա,

3.14.2. Օգտագործողի նախաձեռնությամբ՝ Օգտագործողի համապատասխան դիմումի հիման վրա, որը Թողարկողին է ներկայացվել հետևյալ եղանակներով.

ա) Թողարկողի զանգերի սպասարկման ծառայություն բանավոր դիմելով,

բ) անձը հաստատող փաստաթղթի առկայությամբ անձամբ դիմելով Թողարկողի Սպասարկման կետ,

գ) իր նույնականացման տվյալների օգտագործմամբ էլեկտրոնային դիմում ներկայացնելով Թողարկողին,

3.14.3. սեփական նախաձեռնությամբ՝ Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հետևյալ դեպքերում.
ա) Պայմանագրով սահմանված Հաշվի օգտագործման պայմանները Օգտագործողի խախտելու վերաբերյալ Թողարկողի կասկածի դեպքում,
բ) Հաշվին չարտոնագրված մուտքի կասկածի առկայության դեպքում,
գ) ոչ ստանդարտ կամ տարօրինակ բարդ սխեմայով կատարվող Գործարքների առկայության դեպքում, որոնք բնորոշ չեն Թողարկողի Օգտագործողներին՝ նմանատիպ Գործարքների կատարելիս,
դ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջները Թողարկողի կատարելու դեպքում,
ե) Թողարկողի նկատմամբ Օգտագործողի չկատարված պարտավորության դեպքում,
զ) անձնական կամ հետադարձ կապի տվյալները փոփոխվելիս նոր՝ վավեր տվյալներ չտրամադրելու, ինչպես նաև նույնականացման հիմք հանդիսացած՝ անձը հաստատող փաստաթղթի և (կամ) վճարային քարտի և (կամ) բանկային հաշվի վավերականության սպառման դեպքում վավեր անձը հաստատող փաստաթուղթ և (կամ) վճարային քարտ և (կամ) բանկային հաշիվ չտրամադրելու դեպքում:

3.15. Հաշվի արգելափակումը Բջջային հավելվածում Օգտագործողի բոլոր գործառնությունների կամ դրանց մի մասի արգելումն է:

3.16. Թողարկողի նախաձեռնությամբ Հաշվի արգելափակման ժամկետները կախված են արգելափակման հիմքերից.
ա) մինչև Օգտագործողի թույլ տված՝ Հաշվի օգտագործման պայմանների բոլոր խախտումների վերացումը,
բ) մինչև Թողարկողը վստահ լինի, որ Օգտագործողի Հաշվին չարտոնագրված մուտք տեղի չի ունեցել,
գ) մինչև Օգտագործողի՝ կասկածելի Գործարք(ներ)ի մասով համապատասխան բացատրությունների և փաստաթղթերի ներկայացումը, որոնք պահանջել է Թողարկողը,
դ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պայմանների համապատասխան,
ե) մինչև Օգտագործողի կողմից Էլեկտրոնային փողի համալրումը այն չափով, որքան կազմում է Թողարկողի նկատմամբ Օգտագործողի չկատարված պարտավորությունը,
զ) մինչև անձնական կամ հետադարձ կապի փոփոխված տվյալների կամ վավեր անձը հաստատող փաստաթղթի և (կամ) վճարային քարտի և (կամ) բանկային հաշվի տրամադրումը:

3.17. **Հաշվի օգտագործման պայմանները.**
3.17.1. Օգտագործողը պարտավոր է Հաշիվն օգտագործելիս պահպանել ՀՀ օրենսդրությունը, Թողարկողի և երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը,

3.17.2. Օգտագործողը պարտավոր է Հաշիվն օգտագործել անձամբ, իրավունք չունի տեղեկացնել կամ որևէ եղանակով երրորդ անձանց տրամադրել իր մուտքային տվյալները,
3.17.3. Օգտագործողը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել իր Հաշվի մասին տեղեկությունները գաղտնի պահելու և չարտոնված մուտքը բացառելու անհրաժեշտ բոլոր միջոցները,
3.17.4. Օգտագործողը իրավունք չունի Հաշիվն օգտագործել հակաիրավական գործողություններ կատարելու համար:

3.18. Օգտագործողի՝ իր մուտքային տվյալների օգտագործմամբ Թողարկողին ուղարկած վճարման հրահանգը Կողմերի համար պատշաճ և բավարար է՝ Օգտագործողին նույնականացնելու համար:

3.19. Թողարկողն իրավունք ունի նույնականացնել Գործարքի շահառուին՝ Օգտագործողի վճարման հրահանգում Գործարքին վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն լրացնելու պարտադիր պահանջ սահմանելու միջոցով:

3.20. Օգտագործողի մուտքային տվյալները Պայմանագրի շրջանակներում հանդիսանում են Օգտագործողի ստորագրության անալոգ:

3.21. Եթե Հաշվառման հաշվով վերջին 12 (տասներկու) օրացուցային ամիսների ընթացքում չի իրականացվել որևէ Գործարք, ապա Թողարկողն իրավունք ունի Հաշվառման հաշվից գանձել սպասարկման վճար՝ 13-րդ (տասներեքերորդ) ամսից սկսած (ներառյալ՝ 13-րդ (տասներեքերորդ) ամսվա համար), յուրաքանչյուր պասիվ ամսվա համար 1000 (մեկ հազար) ՀՀ դրամի չափով, իսկ Հաշվառման հաշվում 1000 (մեկ հազար) ՀՀ դրամից պակաս գումար լինելու դեպքում՝ Հաշվառման հաշվում առկա մնացորդի չափով: Ընդ որում՝ սույն կետի իմաստով Հաշվառման հաշվով Գործարքի իրականացում չեն համարվում Թողարկողի կողմից Հաշվառման հաշվի սպասարկման վճարի գանձման կամ պետական որևէ մարմնի իրավական ակտի հիման վրա Հաշվառման հաշվից միջոցների բռնագանձման դեպքերը:

4. Հաշվի համալրումը, Հաշվից մարումը, փոխարկումը, փոխանցումը, Էլեկտրոնային փողի արժեքը, գործողության ժամկետը, Հաշվով Գործարքների կատարումը և Հաշվի փակումը

4.1. Թողարկողի թողարկած **Էլեկտրոնային փողի 1 (մեկ) միավորը համարժեք է 1 (մեկ) ՀՀ դրամի**, որի գործողության ժամանակամիջոցը սահմանված է անժամկետ:

4.2. **Էլեկտրոնային փողի լիցքավորումը (համալրումը)** կատարվում է անկանխիկ եղանակով բանկային հաշվից և (կամ) վճարային քարտից:

4.3. Թողարկողը կարող է սահմանել լրացուցիչ վճարովի ծառայություններ՝ Հաշվի համալրման, Հաշվից միջոցների մարման, փոխանցման դեպքում SMS հաղորդագրության միջոցով կամ այլ ձևով Օգտագործողին տեղեկացնելու համար:

4.4. Համալրման այլ եղանակների ու ծառայությունների դիմաց գանձվող վճարների մասին տեղեկությունները զետեղվում են Թողարկողի կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

4.5. Հաշվից մարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ բանկային հաշվին և (կամ) վճարային քարտին փոխանցելու միջոցով:

4.6. Թողարկողը Հաշվից մարման համար Օգտագործողի անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում՝ իր պաշտոնական ինտերնետային կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

4.7. Հաշվից մարման հրահանգում Օգտագործողի նշած գումարի չափով կատարվում է Էլեկտրոնային փողի մարում՝ Հաշվում առկա միջոցների բավարար լինելու դեպքում:

4.8. Հաշվից մարման հրահանգը մերժվում է, եթե հրահանգում Օգտագործողի նշած չափով գումար Հաշվում առկա չէ: Մարման հրահանգը ենթակա չէ մասնակի կատարման:

4.9. **Համակարգից Էլեկտրոնային փողի մարման ժամանակ Էլեկտրոնային փողի 1 (մեկ) միավորը համարժեք է 1 (մեկ) ՀՀ դրամի:**

4.10. **Օգտագործողի Հաշվառման հաշվից Էլեկտրոնային փողի մարումը կատարվում է ՀՀ դրամով:**

4.11. **Վճարային կամ փոխանցման Գործարք** կատարելիս Օգտագործողի Հաշվից էլեկտրոնային միավորների ելքագրումը կատարվում է իրական ժամանակում, Գործարքի կատարման պահին:

4.12. **Էլեկտրոնային փողի փոխարկումը** կատարվում է իրական ժամանակում, ինչը նշանակում է, որ փոխարկման ժամանակ Օգտագործողի Հաշվառման հաշվից էլեկտրոնային միավորները առցանց ռեժիմում ելքագրվում են և միանգամից հաշվեգրվում այլ համակարգի նշված հաշվառման հաշվին:

4.13. Էլեկտրոնային փողի փոխարկման համար կարող է սահմանվել միջնորդավճար, որն Օգտագործողին ի գիտություն է ներկայացվում նախքան Գործարքը կատարելը:

4.14. Էլեկտրոնային փողի փոխարկումը արտասահմանյան համակարգերի թողարկած Էլեկտրոնային փողով կատարելու դեպքում Թողարկողը սահմանում է փոխարկման փոխարժեք, որն Օգտագործողին ի գիտություն է ներկայացվում նախքան Գործարքը կատարելը:

4.15. Օգտագործողը սույնով տալիս է իր համաձայնությունը Թողարկողին՝ որևէ հիմքով Թողարկողի նկատմամբ Օգտագործողի չկատարված պարտավորություն առաջանալու դեպքում Հաշվառման հաշվի հետագա համալրումներներից իրականացնել անակցեպտ գանձում՝ Թողարկողի առջև գոյացած պարտքը մարելու համար:

4.16. Եթե Օգտագործողը կատարված վերջին Գործարքից հետո 12 ամսվա ընթացքում իր Հաշվով գործառնություններ չի կատարում, և Հաշվում մնացորդ առկա չէ, ապա Թողարկողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և փակել Օգտագործողի Հաշիվը (դադարեցնել Հաշվի օգտագործման հնարավորությունը)՝ այդ մասին սույն Պայմանագրի 7.4 կետով նախատեսված որևէ եղանակով ծանուցելով Օգտագործողին: Մնացորդ ունեցող Հաշվառման հաշիվը չի փակվում:

4.17. Օգտագործողը կարող է ցանկացած ժամանակ միակողմանի լուծել Պայմանագիրը և փակել իր Հաշիվը՝ իր նույնականացման տվյալների օգտագործմամբ դիմում ներկայացնելով Թողարկողին:

4.18. Պայմանագիրը լուծվում և Հաշիվը փակվում է Թողարկողի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

4.19. Կցված բանկային քարտից և/կամ բանկային հաշվից կատարված համալրումները ենթակա չեն չեղարկման:

5. Օգտագործողի նույնականացումը

5.1. Համակարգում Օգտագործողի անունով Հաշվառման հաշիվ բացելու և վերջինիս նույնականացնելու համար Հաշվառման հաշվին կցվում է Օգտագործողի բանկային հաշիվ և (կամ) վճարային քարտ՝ վերջինների վերաբերյալ տվյալները գրանցելով Համակարգում: Առանց Օգտագործողի անունով բանկային հաշվի և (կամ) վճարային քարտի տվյալները գրանցելու Օգտագործողի անունով Հաշվառման հաշիվ չի բացվում:

5.2. Կանոնակարգի 5.1 կետով սահմանված կարգով Հաշվառման հաշվի Օգտագործողը կարող է նույնականացվել նաև հետևյալ տվյալների (ներառյալ՝ եթե համապատասխան տեղեկատվությունը հավաստվում է իրավասու փաստաթղթով, ապա ներկայացվում է նաև այդ վավեր փաստաթուղթը) հիման վրա.

ա) ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանուն, իրավաբանական անձի անվանում,
բ) ֆիզիկական անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցման փաստաթղթի տվյալներ (պետական գրանցման, հաշվառման համարներ):

5.3. Օգտագործողի նույնականացումը կարող է իրականացվել.
ա) Բջջային հավելվածով,
բ) Սպասարկման կետերում,
գ) Տերմինալների միջոցով,
դ) Թողարկողի առաջարկած այլ եղանակով:

5.4. Թողարկողը Օգտագործողի նույնականացման անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ պարզ և մատչելի ուղեցույց է տրամադրում իր պաշտոնական ինտերնետային կայքում և (կամ) Բջջային հավելվածում:

5.5. Թողարկողը Օգտագործողին հնարավորություն է տալիս կատարել իր նույնականացնող տվյալների փոփոխություն:

5.6. Օգտագործողը պարտավոր է Թողարկողին տեղյակ պահել իր անձնական տվյալների փոփոխության, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի կորստի վերաբերյալ և կրում է Թողարկողի մոտ տեղեկությունների բացակայության հետևանքով առաջացած վնասների ռիսկը:

6. Կողմերի իրավունքները և պարտականությունները

6.1. **Թողարկողն իրավունք ունի.**
6.1.1. մերժել Օգտագործողի Գործարքի իրականացումը, եթե նա չի գրանցվել/նույնականացվել Պայմանագրով սահմանված կարգով,
6.1.2. մերժել Օգտագործողի Գործարքի իրականացումը, եթե Օգտագործողի հաշվում առկա Էլեկտրոնային փողի մնացորդը բավարար չէ նման Գործարք կատարելու և Թողարկողի սահմանած միջնորդավճարը գանձելու համար,
6.1.3. մերժել Օգտագործողի Գործարքի իրականացումը, եթե դրա կատարումը սահմանափակված կամ արգելված է Համակարգի կանոններով և ՀՀ գործող օրենսդրությամբ,
6.1.4. մերժել Օգտագործողի Գործարքի իրականացումը, եթե Օգտագործողի ներկայացրած Գործարքի հրահանգում նշված տեղեկությունները սխալ են կամ բավարար չեն տվյալ տիպի Գործարքը կատարելու համար,
6.1.5. չկատարել Օգտագործողի հրահանգը, որի համար ներկայացված չեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը,

6.1.6. Պայմանագրով և (կամ) ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում արգելափակել Օգտագործողի Հաշիվը,

6.1.7. Օգտագործողից պահանջել Օգտագործողի վերաբերյալ, ինչպես նաև նրա կատարած Գործարքների մասով տեղեկություններ և փաստաթղթեր՝ ներառյալ վիրտուալ հաշվում առաջացած փողերի ծագման աղբյուրների, կատարված Գործարքի հիմքերի, շահառուների վերաբերյալ, ինչպես նաև պահանջել փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով պահանջվող տեղեկատվություն ու փաստաթղթեր: Թողարկողի գործունեության հետ կապված կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ Օգտագործողին ծառայություններ մատուցելու նպատակով Թողարկողն իրավունք ունի Օգտագործողի նույնականացման տվյալները, ինչպես նաև նրա կատարած Գործարքների մասով տեղեկությունները և փաստաթղթերը տրամադրել այլ անձանց, այդ թվում՝ Թողարկողը, որպես Փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված կարգով Օգտագործողի պատշաճ նույնականացում իրականացրած անձ, իրավասու է Թողարկողի՝ ֆինանսական հաստատություն կամ ոչ ֆինանսական հաստատություն հանդիսացող գործընկերներին տրամադրել Օգտագործողի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, ներառյալ՝ փաստաթղթերի պատճենները՝ գործընկերների կողմից Օգտագործողի պատշաճ նույնականացումն իրականացնելու նպատակով:

6.1.8. Պայմանագրով և (կամ) ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում առանց Օգտագործողի հրահանգի, անակցեպտ կարգով նվազեցնել Օգտագործողի հաշվում առկա Էլեկտրոնային փողի մնացորդը,

6.1.9. միակողմանի կարգով սահմանել և (կամ) փոփոխել Հաշվով կատարվող Գործարքների սահմանաչափերը. փոփոխությունները ուժի մեջ են մտնում դրանց մասին տեղեկությունը Թողարկողի կայքում և (կամ) Բջջային հավելվածում հրապարակման պահից, եթե Թողարկողն այլ բան չի նախատեսել,

6.1.10. իրականացնել Համակարգի արդիականացում և ինտերֆեյսի փոփոխություններ, Համակարգի գործունեությունն ապահովող սարքավորումներում և ծրագրերում բարեփոխումների, ծրագրային բարելավումների, անվտանգության մակարդակի բարձրացման և այլ՝ կանխարգելիչ աշխատանքներ կատարելու նպատակով ժամանակավորապես դադարեցնել Համակարգի գործունեությունը՝ նախապես տեղեկացնելով Օգտագործողին,

6.1.11. միակողմանի փոփոխել Պայմանագրի դրույթները՝ այդ մասին տեղեկացնելով իր պաշտոնական կայքի և (կամ) Բջջային հավելվածի միջոցով:

6.2. **Օգտագործողն իրավունք ունի.**

6.2.1. Օգտվել Թողարկողի մատուցած ծառայություններից՝ Պայմանագրի պայմանների համապատասխան,

6.2.2. ստանալ տեղեկություններ՝ առաջարկվող ծառայությունների և դրանց դիմաց գանձվող վճարների վերաբերյալ,

6.2.3. Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան ստանալ տեղեկություններ՝ իր Հաշվով կատարված Գործարքների մասին,

6.2.4. Թողարկողին ներկայացնել դիմումներ ու բողոքներ՝ Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով,
6.2.5. Թողարկողին ցանկացած ժամանակ հրահանգել մարել կամ այլ կերպ տնօրինել իր Հաշվի մնացորդը:
6.2.6. Համակարգում նշել իր էլեկտրոնային փոստի հասցեն՝ ամսական կտրվածքով Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ քաղվածքը ստանալու համար: Ընդ որում՝ եթե Օգտագործողը Համակարգում չի նշել իր էլեկտրոնային փոստի հասցեն, նշանակում է՝ Օգտագործողը հրաժարվում է ստանալ ամսական կտրվածքով Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ քաղվածքը:

6.3. **Թողարկողը պարտավոր է.**
6.3.1. ապահովել Համակարգի անխափան աշխատանքը,
6.3.2. իր հնարավորությունների սահմաններում ձեռնարկել միջոցներ՝ Օգտագործողի Հաշիվ չարտոնագրված մուտքը կանխելու համար,
6.3.3. Օգտագործողին տեղեկացնել Հաշվով կատարված Գործարքների և Հաշվի մնացորդի վերաբերյալ,
6.3.4. միջոցներ ձեռնարկել Թողարկողի միջոցով փոխանակվող տեղեկատվության գաղտնիության պահպանման և երրորդ անձանց չլիազորված մուտքերից, օգտագործումից և (կամ) բացահայտումից պաշտպանության ուղղությամբ,
6.3.5. Օգտագործողի պահանջի դեպքում ապահովել Օգտագործողի կատարած Գործարքները հիմնավորող հաշվարկային փաստաթղթերի (վճարման փաստաթղթային անդորրագրի) տրամադրում,
6.3.6. Կեղծիքների, չարտոնագրված գործառնությունների, տեխնիկական սխալների կամ այլ խնդիրների դեպքում, եթե դրանք առաջացել են Թողարկողի մեղքով, փորձել վերականգնել Համակարգի աշխատանքը՝ ողջամիտ ժամկետում, հակառակ դեպքում հատուցել Օգտագործողի կրած իրական վնասը՝ Օգտագործողի նման պահանջ ներկայացնելու դեպքում,
6.3.7. Օգտագործողին հնարավորություն ընձեռել, Համակարգում իր էլեկտրոնային փոստի հասցեն նշելու դեպքում, ստանալ իր Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ ամսական քաղվածք,
6.3.8. պահպանել Օգտագործողի անձնական տվյալների գաղտնիությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. **Օգտագործողը պարտավոր է.**
6.4.1. երրորդ անձանց չտրամադրել և որևէ կերպ չհաղորդել իր մուտքային տվյալները,
6.4.2. Թողարկողին ներկայացնել հետադարձ կապի ճշգրիտ և վավեր տվյալներ,
6.4.3. նույնականացված Օգտագործողի կարգավիճակ ստանալու համար ներկայացնել նույնականացման արժանահավատ տվյալներ,
6.4.4. անձնական կամ հետադարձ կապի տվյալների փոփոխման դեպքում աշխատանքային 5 (հինգ) օրվա ընթացքում Թողարկողին ներկայացնել փոփոխված տվյալները, ինչպես նաև նույնականացման հիմք հանդիսացած՝ անձը հաստատող փաստաթղթի, վճարային քարտի կամ

բանկային հաշվի վավերականության սպառման դեպքում ներկայացնել վավեր անձը հաստատող փաստաթուղթ, վճարային քարտ կամ բանկային հաշիվ,

6.4.5. Թողարկողին տրամադրել Պայմանագրի շրջանակներում պահանջված տեղեկությունները և փաստաթղթերը, այդ թվում՝ փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված:

6.4.6. կապի հասանելի միջոցներով (Թողարկողի զանգերի սպասարկման ծառայություն, էլ. փոստ) Թողարկողին անմիջապես տեղեկացնել իր Հաշվի վերաբերյալ որևէ անհապատասխանություն, սխալ կամ Հաշիվ չարտոնագրված մուտք հայտնաբերելու դեպքում,

6.4.7. ապահովել Հաշվառման հաշվի կառավարման վավերապայմանների (հեռախոսահամար, մուտքային տվյալներ) գաղտնիությունը և չարտոնված օգտագործումից պաշտպանվածությունը,

6.4.8. Հաշվառման հաշվի կառավարման համար օգտագործվող բջջային հեռախոսահամարի կորստի կամ Օգտատիրոջ տիրապետումից այլ կերպ դուրս գալու դեպքում կապի հասանելի միջոցներով (օրինակ՝ Թողարկողի զանգերի սպասարկման ծառայություն, էլ. փոստ) անհապաղ տեղեկացնել Թողարկողին: Ընդ որում՝ Հաշվառման հաշվի կառավարման համար օգտագործվող բջջային հեռախոսահամարի կորստի կամ Օգտատիրոջ տիրապետումից այլ կերպ դուրս գալու մասին Թողարկողին չծանուցելու հետևանքով առաջացող բացասական բոլոր հետևանքները կրում է Օգտատերը,

6.4.9. կապի հասանելի միջոցներով (օրինակ՝ Թողարկողի զանգերի սպասարկման ծառայություն, էլ. փոստ) Թողարկողին հնարավորինս սեղմ ժամկետում ծանուցել այնպիսի հանգամանքների առաջացման, փոփոխման կամ դադարեցման մասին, որոնք էական նշանակություն ունեն Թողարկողի գործունեության համար, այդ թվում՝ Համակարգում առաջացած կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների և (կամ) այլ խնդիրների մասին,

6.4.10. կատարել Պայմանագրով սահմանված այլ պարտավորություններ:

7. Պայմանագրի կնքումը (ակցեպտավորումը) և գործողության ժամկետը

7.1. Պայմանագրի ակցեպտավորում (ընդունում) է համարվում Օգտագործողի կողմից Հաշվառման հաշիվ գրանցելը (բացելը):

7.2. Պայմանագրի ակցեպտավորումը նշանակում է Պայմանագրի բոլոր պայմանների լիովին և անվերապահ ընդունում՝ առանց որևէ բացառության կամ սահմանափակման, և հավասարազոր է գրավոր կնքված պայմանագրին:

7.3. Պայմանագրի պայմանների ակցեպտավորման ժամկետները սահմանափակ չեն:

7.4. Պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները կատարվում են էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստի, Թողարկողի պաշտոնական կայքի, Բջջային հավելվածի կամ կարճ հաղորդագրությունների միջոցով, որոնք համարվում են պատշաճ ծանուցում:

7.5. Պայմանագիրը կնքվում է անժամկետ: Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով: Օգտատիրոջ հարմարության համար Պայմանագիրը, ինչպես նաև ծառայությունների դիմաց կիրառվող վճարները և կանոնները կարող են թարգմանվել ու հրապարակվել նաև այլ լեզուներով, ընդ որում՝ նման թարգմանությունների և հայերեն տարբերակի միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակա է հայերեն տարբերակը:

8. Բողոքների քննարկման կարգը

8.1. Պայմանագրի շրջանակներում խնդիրներ կամ անհամապատասխանություններ առաջանալու դեպքում Օգտագործողը կարող է Թողարկողին ներկայացնել դիմում/բողոք:

8.2. Օգտագործողի դիմում/բողոքներն ընդունվում են գրավոր, այդ թվում՝
ա) առձեռն (Թողարկողի Սպասարկման կետերում),
բ) փոստով (Ընկերության փոստային հասցեով),
գ) էլեկտրոնային եղանակով (Ընկերության էլեկտրոնային փոստի info@telcell.am հասցեով):

8.3. Օգտագործողի դիմում/բողոքի քննարկումն իրականացվում է՝ ՀՀ օրենքներով, իրավական այլ ակտերով և Թողարկողի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

8.4. Թողարկողի հաստատած՝ հաճախորդների դիմումների/բողոքների ներկայացման և քննության կարգը հրապարակվում է Թողարկողի պաշտոնական կայքի «Հաճախորդների իրավունքները» բաժնում:

9. Գաղտնիություն

9.1. Կողմերը պարտավորվում են չհրապարակել Պայմանագրի շրջանակներում ստացած տեղեկությունները, որոնք համարվում են գաղտնի՝ Կողմերից յուրաքանչյուրի համար:

9.2. Թողարկողը պարտավորվում է ապահովել Օգտագործողի նույնականացման և մուտքային տվյալների, Հաշվի մնացորդի, էլեկտրոնային փողով կատարված Գործարքների մասին տեղեկությունների, Օգտագործողի անձնական տվյալների գաղտնիությունը: Նշված տեղեկությունները կարող են հրապարակվել կամ օգտագործվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև այն դեպքում, երբ անհրաժեշտ է Ծառայությունների մատուցման կամ Թողարկողի խախտված իրավունքի պաշտպանության համար: Բոլոր այլ դեպքերում նման տեղեկատվությունը կարող է բացահայտվել միայն Օգտագործողի համաձայնությամբ կամ կարգադրությամբ: Թողարկողն իրավունք ունի վճարում ստացող անձին բացահայտել վճարում կատարողի անձնական

տվյալները և վճարման Գործարքին վերաբերող մանրամասները՝ Վճարում ստացողի գրավոր պահանջի և Վճարում կատարողի համաձայնության առկայությամբ:

9.3. Օգտագործողը սույնով տալիս է իր համաձայնությունը Թողարկողին՝ մշակել վերջինիս հասանելի Օգտագործողի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն և փաստաթղթեր, այդ թվում նաև անձը հաստատող փաստաթուղթը, փոխանցել այնպիսի երրորդ անձանց, ովքեր Բջջային հավելվածի միջոցով իրավահարաբերություններ են հաստատում կամ նախատեսում են իրավահարաբերություններ հաստատել Օգտագործողի հետ:

9.4. Պայմանագրի շրջանակներում գաղտնի չեն համարվում այն տեղեկությունները, որոնք Կողմերը կարող էին օրինական ճանապարհով ստանալ այլ աղբյուրներից՝ առանց գաղտնիության պայմանների խախտման:

9.5. Օգտագործողի կատարած Գործարքների մասին տեղեկությունները Պայմանագիրը լուծելուց հետո պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետով:

10. Պատասխանատվություն և անհաղթահարելի ուժի ազդեցություն

10.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

10.2. Թողարկողը պատասխանատվություն չի կրում իրենից անկախ պատճառներով փոստային, ինտերնետ և կապի այլ ծառայությունների խափանման, ինչպես նաև Օգտագործողի հետադարձ կապի տվյալների փոփոխման պատճառով Օգտագործողի՝ ժամանակին ծանուցում չստանալու համար:

10.3. Թողարկողը պատասխանատվություն չի կրում Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կապի, էներգամատակարարման և տեխնիկական այլ խափանումների պատճառով չկատարելու համար:

10.4. Թողարկողը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից Օգտագործողի Հաշվով կատարված Գործարքների և (կամ) Օգտագործողի նույնականացման և (կամ) մուտքային տվյալների բացահայտման համար, եթե դա տեղի է ունեցել Հաշվի օգտագործման ժամանակ կապուղիների գաղտնալսման և (կամ) տվյալների առևանգման հետևանքով:

10.5. Թողարկողը պատասխանատվություն չի կրում Օգտագործողի կողմից իր Հաշվառման հաշվի կառավարման վավերապայմանները երրորդ անձանց տրամադրելու կամ կորստի դեպքում:

10.6. Օգտագործողի կողմից Հաշվի կառավարման վավերապայմանների կորստյան կամ փոփոխման հետևանքով դրանք երրորդ անձանց հայտնի դառնալու կասկածի դեպքում Օգտագործողը պարտավոր է Թողարկողի սահմանած կարգով անհապաղ տեղեկացնել Թողարկողին: Մինչև վավերապայմանների արգելափակումը կամ փոփոխումը Օգտագործողը կրում է դրանց չարտոնված օգտագործման հետևանքների ռիսկերը, այդ թվում՝ պատասխանատվություն է կրում Թողարկողին պատճառված վնասների համար:

10.7. Կողմերն ազատվում են Պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները մասամբ կամ ամբողջությամբ չկատարելու պատասխանատվությունից, եթե դրա պատճառը անհաղթահարելի իրավիճակներն են՝ հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, կապուղիների, էներգամատակարարման խափանում և Կողմերի վերահսկողությունից դուրս այլ իրավիճակներ, ինչպես նաև ՀՀ պետական մարմինների որոշումների, վճիռների և իրավական այլ ակտերի ընդունման դեպքում, որոնք խոչընդոտում են Պայմանագրով Կողմերի պարտավորությունների կատարումը: Կողմերի վերահսկողությունից դուրս իրավիճակ է նաև Թողարկողից անկախ պատճառով կապի խափանման հետևանքով Թողարկողի Համակարգի հնարավոր ընդհատումները:

11. Այլ պայմաններ

11.1. Օգտագործողը երաշխավորում է, որ Պայմանագրի պայմաններն իրեն հասկանալի են և ամբողջությամբ ու անվերապահ ընդունելի:

11.2. Օգտագործողը երաշխավորում է, որ իր Հաշիվը չի օգտագործելու անօրինական գործողություններ կատարելու համար:

11.3. Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ անկախ Օգտագործողի գտնվելու վայրից:

11.4. Օֆերտայի ակցեպտավորմամբ Օգտագործողն ամբողջությամբ գիտակցելով տալիս է իր համաձայնությունը, որ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 1-ին և 3-րդ հարկեր)

11.4.1. Իրականացնի Օգտագործողի անձնական տվյալների սույն Օֆերտայի մեջ նշված մշակում, անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց),

11.4.2. Անձնական տվյալների մշակումն իրականացնի Ընկերության կողմից Օգտագործողին մատուցվող ծառայությունների շրջանակներում և ամբողջ ընթացքում, պահպանելով Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի պահանջները,

11.4.3. Անձնական տվյալների մշակման նպատակով դիմի «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին և վերջինիս միջոցով ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, ինչպես նաև տվյալներ մշակող ցանկացած անձից ստանա անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ թվում «Անձնական տվյալների պաշտպանություն մասին» ՀՀ օրենքով նախատեսված և պաշտպանվող տվյալներ և տեղեկություններ: Մասնավորապես.

- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության շտեմարանից՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տիպ, փաստաթղթի համար, փաստաթուղթը տրամադրող բաժին, հանրային ծառայության համարանիշի առկայություն, հանրային ծառայության համարանիշ, քաղաքացիություն, անձնագրի տրման ամսաթիվ, անձնագրի վավերականության ժամկետ, ՀՀ բնակության կոդ, ՀՀ բնակության մարզ, համայնք, բնակավայր, փողոց, տուն, շենք, բնակարան, անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկար,
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շտեմարանից՝ աշխատավայր /գործատուի ՀՎՀՀ/, հարցման պահին վերջին 12 ամսվա /եթե այլ ժամանակահատված ընտրված չէ/ վճարված եկամտի վերաբերյալ տվյալներ (հարկերն ու այլ պարտադիր վճարումները ներառյալ):

11.5. Սույն Օֆերտայով Օգտագործողը ծանուցված է առ այն, որ Ընկերությունը.

11.5.1. Անձնական տվյալների մշակում իրականացնում է, Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքի, Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի, վճարահաշվարկային ոլորտը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերի և Ընկերության ներքին իրավական ակտերի, այդ թվում Գաղտնիության քաղաքականության հիման վրա Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի պահանջների պահպանմամբ,

11.5.2. Անձնական տվյալների մշակում իրականացնում է Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքի պահանջով պատշաճ ուսումնասիրություն կատարելու և Ընկերության ծառայությունների պատշաճ մատուցման նպատակով,

11.5.3. Մշակում է Օգտագործողի վերաբերյալ հետևյալ անձնական տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տիպ, փաստաթղթի համար, փաստաթուղթը տրամադրող բաժին, հանրային ծառայության համարանիշի առկայություն, հանրային ծառայության համարանիշ, քաղաքացիություն, անձնագրի տրման ամսաթիվ, անձնագրի վավերականության ժամկետ, ՀՀ բնակության կոդ, ՀՀ բնակության մարզ, համայնք, բնակավայր, փողոց, տուն, շենք, բնակարան, անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկար, աշխատավայր/գործատուի ՀՎՀՀ/, հարցման պահին վերջին 12 ամսվա /եթե այլ ժամանակահատված ընտրված չէ/ վճարված եկամուտների (հարկերը և այլ պարտադիր վճարումները ներառյալ) վերաբերյալ տվյալներ: Սույն կետում նշված տվյալներից մշակման են ենթակա միայն այն անձնական տվյալները, որոնք կոնկրետ դեպքում նվազագույնն անհրաժեշտ են Ընկերության և Օգտագործողի կոնկրետ հարաբերություններից բխող և սույն Օֆերտայով սահմանված նպատակին հասնելու համար: Եթե սույն կետում նշված տվյալները (դրանցից յուրաքանչյուրը) անհրաժեշտ չլինեն տվյալները մշակելու կոնկրետ նպատակի համար կամ անհամատեղելի լինեն դրա հետ, ապա Ընկերությունը չի մշակելու այդ անձնական տվյալները,

11.5.4. Օգտագործողից չի պահանջի այնպիսի տվյալներ, որոնք կարող է և հնարավորություն ունի ստանալ իրավասու պետական մարմնից,

11.5.5. Իրականացնում է գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հարցմամբ ստանալու, դրանք ուսումնասիրելու, համեմատելու, Ընկերության վճարների ընդունման համակարգում պահպանելու, ուսումնասիրության և որոշում կայացնելու նպատակով օգտագործելու, անհրաժեշտ ուղղումներ ու փոփոխություններ կատարելու, թարմացնելու, ոչնչացնելու հետ,

11.5.6. Իրավասու է փոխանցել մշակվող անձնական տվյալները բացառապես ծառայությունների մատուցման շրջանակում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձանց,

11.5.7. Օգտագործողի պահանջի հիման վրա իրականացնում է անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում կամ մշակման հետ կապված այլ գործողություններ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի, երբ Ընկերությունը պարտավոր է պահպանել տվյալները կամ իրավասու չէ կատարել Օգտագործողի պահանջը,

11.5.8. Անձնական տվյալների մշակումն իրականացնում է Օգտագործողին ծառայությունների մատուցման ողջ ընթացքում և Օգտագործողի համաձայնության և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջի դեպքում նաև ծառայությունների մատուցումից հետո՝ Օգտագործողի համաձայնությամբ տրված և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետի ընթացքում,

11.5.9. Չունի Օգտագործողի համաձայնությունը հետ կանչելու Ընկերության կողմից մշակված հատուկ կարգ և տվյալ դեպքում գործում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգը:

11.6. Օֆերտայի ակցեպտավորմամբ Օգտագործողն ամբողջությամբ գիտակցելով «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ին տալիս է իր համաձայնությունը մասնակցելու «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի կողմից կազմակերպվող գովազդային վիճակախաղ(եր)ին և սույնով տալիս է իր համաձայնությունը, որ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն

11.6.1. Իրականացնի Օգտագործողի անձնական տվյալների սույն Օֆերտայի մեջ նշված մշակում, անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց),

11.6.2. Անձնական տվյալների մշակումն իրականացնի Ընկերության կողմից կազմակերպվող գովազդային վիճակախաղ(եր)ի շրջանակներում և ամբողջ ընթացքում, պահպանելով Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի պահանջները,

11.6.3. Հրապարակի Օգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը և մասնակի քողարկված բջջային հեռախոսահամարը:

11.7. Օգտագործողն իրավունք ունի հրաժարվել Ընկերության կողմից կազմակերպվող գովազդային վիճակախաղ(եր)ին մասնակցելուց:

11.8. Օգտագործողը հաստատում է, որ Բջջային հավելվածով Գործարքներ կամ որևէ այլ գործողություն կատարելիս իր ստորագրության անալոգ են համարվում.

ա) Օգտագործողի մուտքային տվյալները. Օգտագործողի մուտքային տվյալ(ներ)ի օգտագործմամբ իրականացվող բոլոր գործողությունները ճանաչվում են որպես Օգտագործողի կողմից կատարված, Օգտագործողի մուտքային տվյալ(ներ)ի օգտագործմամբ ուղարկվող բոլոր փաստաթղթերը համարվում են Օգտագործողի կողմից ստորագրված և ուղարկված, Օգտագործողի մուտքային տվյալ(ներ)ի օգտագործմամբ հաստատվող բոլոր փաստաթղթերը

համարվում են Օգտագործողի կողմից ստորագրված, այդ թվում նաև այն դեպքերում, երբ փաստաթուղթը հաստատվել է՝ «Հաստատում եմ» կոճակը սեղմելով,

բ) Բջջային հավելվածում Օգտագործողի մուտքագրած էլեկտրոնային փոստի հասցեն. նշված էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված բոլոր նամակները համարվում են Օգտագործողի կողմից ստորագրված և ուղարկված։

12. Թողարկողի վավերապայմանները

Անվանում՝ «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 1-ին և 3-րդ հարկեր

Հարկային հաշվառում՝ ՀՎՀՀ 02703102

Վեբ-կայք՝ www.telcell.am

Էլ.հասցե՝ info@telcell.am